Ավետիք Իսահակյան

Ողջույն ամենքին

Ամսավերջին ապրիլի
Միտքս խոցուն՝ ելա դաշտ,
Բնությունը գրկեց ինձ,
Ինչպես մի մայր սիրաշատ:

Շուրջս փռվել էր հրաշք,
Առավոտն էր բողբոջում,
Նժույգի պես ոսկեբաշ
Արեգակն էր վրնջում;

Հավքերն ուրախ երգեցին,
Ինձ ժպտացին ծիլ ու սեզ,
Որ իրենց պես սրտագոհ,
Զվարթ լինեմ իրենց պես:

Ի՜նչպես խայտում են, խնդում,
Ծփծփում են թևաբախ,
Ուլեր, գառներ լուսագեղմ
Եվ թռչունները չքնաղ;

Եվ ծաղիկներ, թիթեռներ,
Եվ զեփյուռներ քաղցրաբույր,
Ծիծեռնակներ սրաթև,
Եվ դայլայլող ակն-աղբյուր:

Ու սրտիս մեջ մեկը ինձ
Խոսք է ասում մտերիմ, -
«Կանգնի՛ր, ո՛վ մարդ, և սիրով՝
Ողջագուրիր ամենքին:

Գլուխդ բա՛ց, ողջունի՛ր
Եղնիկներին, ծառերին,
Թռչուններին, թփերին,
Առվակներին, գառներին;

Նրանք հավերժ հարազատ
Եղբայրներն են քո խոնարհ,
Ծնած-սնած մի մորից
Քույրիկները քո բարի:

Ծունը իջի՛ր երկյուղած,
Եվ այս մամոռտ ժայռը մեծ
Խոնարհ սրտով համբուրի՛ր –
Նա եղբայրն է քո երեց»:

1940